Հաստատված է

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 18 մայիսի 2022 թ. N 9-Լ հրամանով

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍԱՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# Բովանդակություն

Ներածություն ..... 2

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ..... 3

2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..... 5

3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..... 23

4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..... 33

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ..... 38

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ..... 41

6.1 ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ..... 42

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՁԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ..... 44

8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 49

9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ..... 51

## Ներածություն

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է:

Տեսչական մարմնի խնդիրներն են քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման ոլորտներում:

Իր առջև դրված խնդիրները կարգավորելու նպատակով Տեսչական մարմինը 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հետևողականորեն իրականացրել է «ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» 11.06.2018թ. թիվ 730-Լ ՀՀ վարչապետի որոշմամբ իրեն վերապահված և 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված գործառույթները:

## 1. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի 2022 թվականի առաջին եռամսյակում գործունեության տարեկան ծրագրով սահմանված ժամկետներում և նախատեսված ծավալով կատարվել են հետևյալ միջոցառումները՝

- ✓ Բուժ հաստատություններում հրդեհատեխնիկական հետազոտությունների իրականացում.
- ✓ Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկությունների ներկայացում քաղաքաշինության կոմիտե.
- ✓ ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 30-10-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին 2014 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 263-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշումը փոխարինող նոր իրավական ակտի մշակման աշխատանքներին մասնակցություն.
- ✓ Տեխնիկական և հրդեհային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ նախատեսված 4 իրազեկման աշխատանքների իրականացում.
- ✓ Քաղաքաշինության ոլորտի կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ նախատեսված իրազեկման 3 աշխատանքի փոխարեն 7-ի իրականացում.
- ✓ Տրանսպորտային անվտանգության կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման 5 աշխատանքի փոխարեն 11-ի իրականացում.
- ✓ Էներգետիկայի բնագավառի և էներգասպառման ոլորտի կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման 2 աշխատանքի փոխարեն 3-ի իրականացում.
- ✓ Տեսչական մարմնի ղեկավարի հետ մամուլի ասուլիսի կազմակերպում և անցկացում.
- ✓ Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների, վարչական վարույթների, ահազանգերի, հարցումների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում:

Տեսչական մարմնի 2022 թվականի առաջին եռամսյակում գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումը կատարվել է ոչ ամբողջ ծավալով.

- ✓ գեոդեզիայի և հողօգտագործման ոլորտի կանոնների պահպանման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ իրազեկման 3 աշխատանքի փոխարեն 2-ի իրականացում.
- ✓ նախատեսված 3 իրազեկում-հանդիպումների փոխարեն 2-ի կազմակերպում Երևանում և ՀՀ մարզերում՝ մարզպետարանների, համայնքների ներկայացուցիչների, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, տնտեսավարող սուբյեկտների հետ։

2022 թվականի առաջին եռամսյակում գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումների կատարումը հետաձգվել է.

- ✓ Քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի կազմում և առաջարկության ձևով ներկայացում.
- ✓ «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունների ներկայացում.
- ✓ նախատեսված 2 իրազեկող տեսանյութերից հրապարակվել է միայն մեկ, քանի որ Վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջարկով երկրորդ տեսանյութի տեքստային ու տեսանյութի տևողության առումով փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել։

Տեսչական մարմնի 2022 թվականի առաջին եռամսյակում գործունեության տարեկան ծրագրով սահմանված հետևյալ միջոցառումը չի իրականացվել՝ անհաժեշտությունը վերանալու հետևանքով.

- ✓ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 730-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին առաջարկություններ ներկայացում։

## 2 ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Տրանսպորտային անվտանգության բնագավառում**

Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով տրանսպորտային անվտանգության բնագավառում առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված 6 ստուգումից իրականացվել է 4-ը կամ նախատեսված ստուգումների 66,6% (2021 թվականին՝ ՀՀ կառավարության 08.08.2019թ. 1025-Ն որոշման հավելված 1-ում փոփոխություն կատարելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ տարեկան ծրագրում ընդգրկված որևէ ստուգում չի իրականացվել, իսկ 2020 թվականին՝ 5 ստուգում)։ 2 ստուգում չի իրականացվել, քանի որ ստուգման ենթակա կազմակերպությունները հրաժարվել էին երթուղու սպասարկման իրավունքից։ Նշված ժամանակահատվածում չեն իրականացվել ոչ պլանային ստուգումներ։

Ստուգումների արդյունքում տրվել է 2 տեղեկանք խախտումների բացակայության վերաբերյալ («ԷԼԻՏԲԱՍ» և «ԱՆՆԱ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊ ընկերություններ) և կազմվել է 2 արձանագրություն հայտնաբերված 11 խախտումների վերաբերյալ (2020 թվականին՝ 8 արձանագրություն)։ Կատարվել է 1 վերստուգում (2021 թվականին՝ 2 վերստուգում, 2020 թվականին՝ վերստուգում չի իրականացվել)։

Երկու կազմակերպությունների ստուգման արդյունքում կրկնվող խախտումը վերաբերում է հավաքակայանում տրանսպորտային միջոցների նախաուղերթային տեխնիկական զննման համար նախատեսված երկարության դիտափոսի /էստակադա/ բացակայությանը։

1 ստուգման տևողությունը կազմել է 2,75 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2 մարդ/օրը։ 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 2 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2 մարդ/օրը։ Նախորդ տարվա ընթացքում իրականացված մեկ վերստուգման տևողությունը կազմել է 1,5 օր, վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2 մարդ/օրը։

**Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում**

2022թ. ստուգումների տարեկան ծրագրով էներգետիկայի և էներգասպառման բնագավառում առաջին եռամսյակի ընթացքում նախատեսված էր կատարել ստուգումներ 59 տնտեսավարող սուբյեկտների օբյեկտներում։ Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 44 ստուգում (ընդհանուր քանակի 74.6%) և 5 վերստուգում։ Ստուգումների գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 12 օբյեկտ չի ստուգվել չգործելու կամ էներգատեղակայանքների բացակայության պատճառով, 3 օբյեկտների կարգավիճակները պարզելու համար կատարվել է հարցում։




2022 թվականի առաջին եռամսյակում կատարված բոլոր ստուգումները նախատեսված էին Ստուգումների տարեկան ծրագրով:

2021թ. նույն ժամանակահատվածում նախատեսված էր կատարել ստուգումներ 16 տնտեսավարող սուբյեկտներին պատկանող 18 օբյեկտներում: Նախատեսված ստուգումներից իրականացվել է 14-ը (16 օբյեկտ, ընդհանուր քանակի 87,5%), 2-ը չի ստուգվել՝ չգործելու պատճառով: Իրականացվել էր 21 վերստուգում:

2020թ. նույն ժամանակահատվածում տարեկան ծրագրով նախատեսված էր կատարել 53 ստուգում, որից իրականացվել էր 35-ը (66%):



2022թ. ստուգումների արդյունքում արձանագրվել է 601 խախտում (2021թ.՝ 174 խախտում, 2020թ.՝ 103 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ համեմատական գրաֆիկական արտացոլումը.




Ստուգումների ընթացքում **<u>տնտեսավարող սուբյեկտների 44 օբյեկտներում (կամ դրանց մասնաճյուղերում)</u>** բացահայտվել է 205 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 34.1%-ը (2021թ. 14 օբյեկտում՝ 62 խախտում, որը կազմել է ընդհանուր խախտումների 35.6%-ը)։ Հիմնական խախտումներն են.

- *առկա չեն գազի տնտեսության շահագործման, սպասարկման և վերանորոգման հատուկ հրահանգները՝ հաստատված կազմակերպության գլխավոր ինժեների կողմից – 31 խախտում (2021թ.՝7 խախտում),*
- *կազմակերպության գազի տնտեսությունները շահագործող ինժեներատեխնիկական անձնակազմի (ԻՏԱ), գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող ԻՏԱ, գազամատակարարման օբյեկտների շինարարությունն իրականացնող շինմոնտաժային կազմակերպությունների ԻՏԱ գիտելիքների ստուգումը չի անցկացվում կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ պետական վերահսկողության իրավասություն ունեցող մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ – 22 խախտում (2021թ.՝10 խախտում),*
- *առկա չեն գազատար խողովակների ազգային ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին համապատասխանության անհրաժեշտ հաստատված փաստաթղթերը- 19 խախտում,*

- *(2021թ.՝ գազավտանգավոր աշխատանքներ իրականացնող աշխատակիցների (այդ թվում՝ եռակցողների) գիտելիքների ստուգումը չի անցկացվում կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ պետական վերահսկողության իրավասություն ունեցող մարմնի ներկայացուցչի մասնակցությամբ – 10 խախտում):*

<u>Գազաբաշխման և գազասպառման միջին և բարձր ճնշման 44 էներգատեղակայանքներում</u> ստուգումների արդյունքում բացահայտվել է 317 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 52.7%-ը (2020թ. 3 օբյեկտում բացահայտվել է 16 խախտում, որը կազմել է ընդհանուր խախտումների 15.5%-ը: 2021թ. 13 օբյեկտում՝ 104 խախտում, այսինքն՝ 59.8%-ը):

Հիմնական խախտումներն են.

- *առկա չեն գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հրահանգները - 32 դեպք (2021թ.՝7 դեպք),*
- *առկա չեն գազատարների տեխնիկական սպասարկման աշխատանքների հրդեհային անվտանգության հրահանգները - 34 դեպք,*
- *չի կատարվում գազատարի տեխնիկական շահագործման՝ շրջայցային կամ տեխնիկական սպասարկումը (գննում, կարգաբերում և մասնակի նորոգում) - 29 դեպք,*
- *(2021թ. 7-ական դեպք՝ տեխնիկական սպասարկման ժամանակ սահմանված ժամկետում չի կատարվել փակող արմատուրների և ապահովիչ կափույրների աշխատունակության և կիպության ստուգումը, չեն կատարվել բոլոր միացումների և արմատուրների կիպության ստուգումը, գազի արտահոսքի վերացումը, զտիչների գննումը, շփվող մասերի յուղումը, խցուկների խտացումը, չեն կատարվել ճնշման կարգավորիչի թաղանթի (մեմբրանի) զգայնության և կիպության որոշումը):*

<u>Գազի համակարգի՝ գազափոխադրման բարձր ճնշման 5 սուբյեկտում</u> ստուգման ընթացքում բացահայտվել է 79 խախտում, այն խախտումների ընդհանուր թվի (601) 13.1% է կազմում, իսկ 2021թ. վերստուգված 1 սուբյեկտում վերացվել են բոլոր 5 խախտումները:

<u>110կվ և բարձր լարման 2 էլեկտրատեղակայանքի՝ ենթակայանի և բաշխիչ սարքվածքի</u> վերստուգման արդյունքում վերացվել են բոլոր 16 խախտումները, արդյունքում տրամադրվել է 2 տեղեկանք (Կոտայքի մարզում՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ ՓԲԸ-ի ՀՐԱԶԴԱՆ ՀԷԿ մասնաճյուղ և ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶԷԿ) ԲԲԸ):

2022թ. առաջին եռամսյակում 5 վերստուգումների արդյունքում պարզվել է, որ ստուգումների ընթացքում հայտնաբերված 75 խախտումներից կազմակերպությունների կողմից վերացվել են 29-ը (38.7%-ը)։ 2021 թվականի 21 վերստուգումների արդյունքում պարզվել էր, որ 153 խախտումներից կազմակերպությունների կողմից վերացվել են 118-ը (77.1%-ը)։




2022թ. առաջին եռամսյակում ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել են պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող թվով 36 կարգադրագիր (2020թ. նույն ժամանակահատվածում՝ 32, իսկ 2021թ.՝ 19), որոնց համեմատական գրաֆիկական պատկերը բերված է ստորև.




Հաշվետու ժամանակահատվածում 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 2-ը։ 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.2-ը։

2021թ. առաջին եռամսյակի ընթացքում 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 5 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2.3 մարդ/օրը։ 1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1 օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1.9 մարդ/օրը։

**<u>Հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում</u>**

Տեսչական մարմնի 2022 թվականի առաջին եռամսյակում գործունեության տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված էր կատարել ստուգումներ 137 տնտեսավարող սուբյեկտին պատկանող 154 ընդհանուր

նշանակության բազաներում և պահեստներում, արտադրական նշանակության օբյեկտներում, բենզալցակայաններում, գազալցավորման կայաններում, առևտրի և հասարակական սննդի, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող օբյեկտներում, հյուրանոցներում, գիտական և ուսումնական հաստատություններում և այլ օբյեկտներում: Նախատեսված ստուգումներից ավարտվել է 106-ը (112 օբյեկտ, նախատեսված ընդհանուր քանակի 72,73%), ևս 5 ստուգում իրականացվել է պետական մարմնի կողմից ստացված գրությունների հիման վրա: Ստուգումների գործունեության տարեկան ծրագրով նախատեսված 38 օբյեկտ չի ստուգվել չգործելու, ժամանակավոր չգործելու, վարձակալության և սնանկության պատճառով: 4 օբյեկտների կարգավիճակը պարզելու համար կատարվել է հարցում:

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում ընդհանուր թվով 111 տնտեսվարող սուբյեկտների 117 օբյեկտում (ընդ որում՝ 10-ը էներգետիկայի և էներգասպառման բնագավառի հետ համատեղ) իրականացվել է ստուգում: Իրականացվել է 37 վերստուգում:

2021 թվականի առաջին եռամսյակում գործունեության տարեկան ծրագրով հրդեհային և տեխնիկական անվտանգության բնագավառում նախատեսված 103 ստուգումից ավարտվել էր 82-ը (նախատեսված ընդհանուր քանակի 83,87%), ևս մեկ ստուգում իրականացվել է հանրությունից ստացված դիմում-բողոքի հիման վրա: Իրականացվել էր 74 վերստուգում:

2020 թվականի առաջին եռամսյակում Տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 169 ստուգումից ավարտվել էր 125-ը (նախատեսված ընդհանուր քանակի 74%): Եվս 2 ստուգում կատարվել էր ՀՀ վարչապետի հանձնարարականի և 2 ստուգում՝ հանրությունից ստացված (այդ թվում նաև թեժ գծով) դիմում-բողոքների հիման վրա, վերստուգում չէր իրականացվել:

2022, 2021 և 2020 թվականների առաջին եռամսյակների ընթացքում կատարված ստուգումների և վերստուգումների համեմատությունն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.




Ըստ մարզերի 2022 թվականի հաշվետու ժամանակահատվածում կատարած ստուգումները/վերստուգումներն ըստ տարածքային միավորների բաշխված են հետևյալ կերպ.




Ստուգումների արդյունքում արձանագրվել է 572 խախտում, որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.




Ստուգումներն իրականացվել են գործունեության հետևյալ ոլորտներում՝



**Ընդհանուր նշանակության պահեստների և բազաների** տնտեսավարող սուբյեկտների 1 օբյեկտում բացահայտվել է 13 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 2,3%-ը (ընդհանուր խախտումների քանակը 572 է)։

Նշված ժամանակահատվածում ստուգվել է **200 մ² և ավելի մակերեսով առևտրի և հասարակական սննդի 22 օբյեկտ,** որոնցից երկուսը՝ պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա։ Ստուգումների արդյունքում բացահայտվել է 91 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 15,9%-ը։

Հիմնական խախտումներն են.

- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 10 դեպք,*
- *«Ա», «Բ», «Վ» կարգի շինություններում կրակմարիչները տեղադրված չեն հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա - 10 դեպք,*
- *արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազան – 9 դեպք,*
- *առևտրի և հասարակական սննդի օբյեկտները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 8 դեպք,*
- *Օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով – 7 դեպք։*

Ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է 3 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ։

**Մինչև 200 մ² մակերեսով առևտրի և հասարակական սննդի 2 օբյեկտում** ստուգումների արդյունքում բացահայտվել է 3 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,5%-ը։

**200 մ² և ավելի մակերեսով արտադրական կազմակերպությունների 18** օբյեկտում բացահայտվել է 69 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 12,1%-ը։ Ստուգումներից 3-ն իրականացվել է պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա։

Հիմնական խախտումներն են.

- *կախված մակերեսի չափերից արտադրական շենքերն ու շինությունները սարքավորված են հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով – 12 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին - 9 դեպք,*
- *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը չեն գտնվում սարքին վիճակում - 9 դեպք,*
- *500 մ3-ից ավելի ծավալով արտադրական շենքերն ու շինություններն սարքավորված չեն հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 լ/վրկ ջրի շիթով – 8 դեպք,*

• *ներքին հակահրդեհային ջրամատակարարման ցանցի վրա տեղակայված հրշեջ ծորակները համալրված չեն փողակով և փողրակով – 6 դեպք։*

**Մինչև 200 մ² մակերեսով արտադրական կազմակերպությունների** 4 օբյեկտում բացահայտվել է 19 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 3,3%-ը։

**Բենզալցակայանների 29** օբյեկտում բացահայտվել է 92 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 16,1%-ը։

Հիմնական խախտումներն են.

• *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 15 դեպք,*

• *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 14 դեպք,*

• *բենզալցակայանը սարքավորված չէ հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 13 դեպք,*

• *հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 13 դեպք,*

• *օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով – 8 դեպք,*

• *բենզալցակայանի տարածքն ապահովված չէ շանթարգելման համակարգով – 8 դեպք։*

**Հյուրանոցների 4** օբյեկտում բացահայտվել է 20 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 3,5%-ը։

**Գազալցավորման կայանների 37** օբյեկտում բացահայտվել է 223 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 39,0%-ը։

Հիմնական խախտումներն են.

• *գազալցակայանի տարածքում տեղակայված շինությունները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով – 19 դեպք,*

• *արտաքին հրդեհաշիջումն ապահովված չէ տարողություններից 40 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա գտնվող ոչ պակաս 2 հրշեջ հիդրանտների կամ ոչ պակաս 100 մ³ տարողությամբ հակահրդեհային ջրավազանի միջոցով – 17 դեպք,*

• *ԱԳԼՃԿ-ի տարածքում իրեն պատկանող շինությունների միջև նորմերով պահանջվող նվազագույն միջտարածությունները պահպանված չեն – 16 դեպք,*

• *պայթունավտանգ կարգի շինություններում տեղադրված չեն գազի վտանգավոր կոնցենտրացիայի ազդանշանման սարքեր – 16 դեպք,*

• *հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 16 դեպք,*

• *հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 16 դեպք։*

**Գիտական և ուսումնական հաստատությունների 4** օբյեկտում բացահայտվել է 23 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 4,0%-ը:

**Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող մեկ կազմակերպությունում** բացահայտվել է 6 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,0%-ը:

**Առողջարարական, հանգստյան տների և զբոսաշրջության հաստատությունների** համար տնտեսավարող սուբյեկտների մեկ օբյեկտում բացահայտվել է 4 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 0,7%-ը:

**Հիվանդանոցների, պոլիկլինիկաների և ամբուլատորիաների** համար տնտեսավարող սուբյեկտների 2 օբյեկտում բացահայտվել է 9 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 1,6%-ը:

Առաջին եռամսյակում իրականացված ստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է պարտադիր կատարման միջոցառումները և դրանց կատարման ժամանակացույցը սահմանող 95 կարգադրագիր, 22 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ:




Իրականացվել է 37 վերստուգում, որոնց արդյունքում խախտումների քանակը նվազել է 54%-ով:




Վերստուգումների արդյունքում կազմվել և տրամադրվել է 15 տեղեկանք՝ թերությունների բացակայության վերաբերյալ:




Վերստուգումներն ըստ գործունեության ոլորտների ունեն հետևյալ գրաֆիկական պատկերը.



Ստուգումների և վերստուգումների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 39 օբյեկտ, դրանք են՝ «ՎԱՆԱՆԱՎԱԿ» ՍՊԸ, «ԼԵՎ-ՎԱԳ» ՍՊԸ, «ՄՈՒԼՏԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ, «ՄԱԳԱՍ ԻՆՎԵՍՏ» ՓԲԸ, «ԿԱՐՄԻՐ ԿԱՄՈՒՐՋ» ՍՊԸ, «ՍԵՅՐԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՎԱՉԱԳԱՆԻ» Ա/Ձ, «ՎԱՐԴԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ, «ՏԱՎՐ» ՍՊԸ, «ԲՐԵՆԴԼԻԴԵՐ Հ/Ձ» ՍՊԸ, «ՀԵՐՄԻՆԵ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ» Ա/Ձ, «ԻՆՈՍԻՄՍ» ՍՊԸ, «ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ» Ա/Ձ, «ՂԵՎՈՆԴ ՍԱՍՄՍՈՆՅԱՆ ՌԱԶՄԻԿԻ» Ա/Ձ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳԱԶՄԱՇ» ՍՊԸ, «ՆՈՒՇ» ՍՊԸ, «ՎԱՀԵ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ» Ա/Ձ, «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ, «ԱՐՄԱՄԱՍՏ» ՍՊԸ, «ՔԱԹ ԱՐՏ» ՍՊԸ, «ՇԱՀՈՒՄՅԱՆ-ՎԻՆ» ՍՊԸ, «ՌՈՒԿԱՐ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ» Ա/Ձ, «ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ» Ա/Ձ, «ՀԳ 11 ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ԳԱԶ-ՕԼ» ՍՊԸ, «ԴԱՎԻԹ ՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» Ա/Ձ, «ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐՇԱԿԻ» Ա/Ձ, «ԱՇՈՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԻ» Ա/Ձ, «ԱՐՏՅՈՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ ԷԴՎԱՐԴԻ» Ա/Ձ, «ՄԱՍԻՍ-94» ՍՊԸ, «ԷԴՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆԻ» Ա/Ձ, «ՔԱՋ ՍԱՐԴԱՐԱՊԱՏՅԻ» ՍՊԸ, «ԱՐՋԱՂԲՅՈՒՐ» ՍՊԸ, «ՎԵԱԳԱՋ» ՍՊԸ, «ԿԱՅԾ» ՓԲԸ, «ԷՅ ԸՆԴ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, «ՎԱՉԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ» Ա/Ձ, «ԼԱՐԳՈ – ՎԻՆՉ» ՍՊԸ, «ՍՊԻՏԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ:

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված ստուգումների 95,7%-ը նախատեսված էր 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով, իսկ 4,3%-ը՝ ոչ պլանային է: 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 2,52 օր (2021 թվականին՝ 3,61 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,93 մարդ/օրը (2021 թվականին՝ 2,12-ը):

Ոչ պլանային ստուգումների 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 1,4 օր (2021 թվականին՝ 2 օր, 2020 թվականին՝ 2,25 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,2 մարդ/օրը (2021 թվականին՝ 1-ը, 2020 թվականին՝ 2-ը):

1 վերստուգման միջին տևողությունը կազմել է 1,27 օր (2021 թվականին՝ 2,08 օր), այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր: Յուրաքանչյուր վերստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 1,81 մարդ/օրը (2021 թվականին՝ 1,95-ը):

**<u>Քաղաքաշինության բնագավառում</u>**

Քաղաքաշինության բնագավառում 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով առաջին եռամսյակում նախատեսված 118 ստուգումներից իրականացվել է 68-ը, ինչը կազմում է նախատեսված ընդհանուր քանակի 57,63%-ը, (2021 թվականի առաջին եռամսյակում 124 ստուգումներից իրականացվել է 86-ը՝ 69,35%-ը, իսկ 2020 թվականի առաջին եռամսյակում ստուգում չի իրականացվել): 50 օբյեկտ չի ստուգվել՝ ավարտական ակտի և այն ստանալու համար դիմում ներկայացնելու (24 օբյեկտ), շինարարական աշխատանքների բացակայության, դադարեցման կամ սուբյեկտին ծանուցելու անհնարինության (19 օբյեկտ), դրական եզրակացության առկայության (1 օբյեկտ), խոչընդոտի (1 օբյեկտ), 2021 թվականի 3-րդ և 4-րդ

եռամսյակներում ստուգված լինելու 4 օբյեկտ, սխալ հասցեի 1 օբյեկտ պատճառով: Միաժամանակ իրականացվել է 10 ոչ պլանային ստուգում՝ 7-ը Երևանում, 2-ը Կոտայքի և 1-ը Շիրակի մարզերում: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 78 ստուգում, որից 24-ը (30,77%) Երևանում, 10-ական (12.82%)՝ Սյունիքի և Արմավիրի մարզերում, 7-ը (8.97%)՝ Կոտայքի մարզում, 5-ը (6.41%)՝ Գեղարքունիքի մարզում, 4-ական (5.12%)՝ Արագածոտնի, Արարատի, Շիրակի և Տավուշի մարզերում, 3-ական (3.85%)՝ Լոռու և Վայոց Ձորի մարզերում:




Ստուգումների արդյունքում արձանագրվել է 243 խախտում (2021 թվականի ընթացքում նույն ժամանակահատվածում արձանագրվել էր 272 խախտում), որոնք ըստ մարզերի ունեն հետևյալ գրաֆիկական արտացոլումը.






Հիմնական խախտումներն են.

➢ շինարարություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների (կապալառու) մոտ հայտնաբերվել է 118 խախտում (2021 թվականի առաջին եռամսյակում 105 խախտում), ինչը կազմում է ընդհանուր խախտումների 48,56%-ը: Առավել կրկնվող խախտումներն են.

- շինարարությունը չի իրականացվում համաձայնեցված նախագծին համապատասխան՝ 43 դեպք,

- շինարարության վարման մատյանում բացակայում են կապալառուի կողմից կատարված համապատասխան նշումներ՝ 15 դեպք,

- շինարարական աշխատանքների ընդհանուր մատյանը լրացված չէ՝ 12 դեպք.

➢ շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 48 խախտում (2021 թվականի առաջին եռամսյակում 65 խախտում), ինչը կազմում է ընդհանուր խախտումների 19,75%-ը: Առավել կրկնվող խախտումները վերաբերում են.

- շինարարության վարման մատյանում խախտումների դեպքում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողի համապատասխան նշումների բացակայության՝ 20 դեպք,

- տեխնիկական հսկողություն իրականացնողի կողմից շինարարության վարման մատյանը չլրացնելու՝ 11 դեպք,

- շինարարության որակի տեխնիկական հսկողի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերի առկա չլինելու՝ 7 դեպք:

➢ շինարարության նկատմամբ **հեղինակային հսկողություն** իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 48 խախտում (2021 թվականի առաջին եռամսյակում 39 խախտում), ինչը կազմում է ընդհանուր խախտումների 19,75%-ը: Առավել կրկնվող խախտումներն են.

- շինարարության վարման մատյանում բացակայում են հեղինակային հսկողություն իրականացնողի համապատասխան նշումները՝ 25 դեպք,
- հեղինակային հսկողություն իրականացնողի կողմից չի լրացվել շինարարության վարման մատյանը՝ 14 դեպք,
- բացակայում են հեղինակային հսկողի կողմից լրացված և ստորագրված ծածկված աշխատանքների ակտերը՝ 9 դեպք,

➢ **կառուցապատողների** մոտ հայտնաբերվել է 17 խախտում (2021 թվականի առաջին եռամսյակում 35 խախտում) (ընդհանուր խախտումների 12,59%-ը), որից ավելի հաճախ՝ 4-ում կառուցապատողը չի ապահովել շինարարության տեխնիկական հսկողության իրականացումը համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության միջոցով, ևս 4-ում՝ կառուցապատողը շինարարությունն չի իրականացնում համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության (կապալառուի) միջոցով,

➢ **համայնքների ղեկավարների** քաղաքաշինական բնագավառում իրականացվող գործունեությունում հայտնաբերվել է 10 խախտում (2021 թվականի առաջին եռամսյակում 31 խախտում), որը կազմում է ընդհանուր խախտումների 4,12%-ը,

➢ **փորձաքննություն իրականացնող** տնտեսավարող սուբյեկտների մոտ հայտնաբերվել է 2 խախտում (2021 թվականի առաջին եռամսյակում 1 խախտում), ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0,82%-ը,

➢ **ճարտարապետաշինարարական նախագիծ մշակող** կազմակերպության գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների մոտ խախտում չի հայտնաբերվել՝ 0 (2021 թվականի առաջին եռամսյակում 2 խախտում), ինչը կազմում է ընդհանուր խախտումների 0 %-ը։

Խախտումների բացակայության վերաբերյալ տրվել է 30 տեղեկանք, կազմվել և տրամադրվել է 33 պարտադիր կատարման ցուցում։



1 ստուգման միջին տևողությունը կազմել է 4,86 (2021 թվականի առաջին եռամսյակում՝ 7,48) օր, այն չի պահանջել լրացուցիչ ֆինանսական ծախսեր։ Յուրաքանչյուր ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցում 1,98 մարդ/օրը (2021 թվականի առաջին եռամսյակում՝ 2,08)։ Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների 88,2%-ը նախատեսված է եղել Ստուգումների տարեկան ծրագրով։

**<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է Տեսչական մարմնի 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով առաջին եռամսյակում նախատեսված 100 մեկական ստուգում Երևանում, Արմավիրի և Արարատի մարզերում, ևս 8 ոչ պլանային ստուգում, որից՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի մեկ ստուգմամբ խախտում չի հայտնաբերվել։ Ստուգումների արդյունքում կազմված որոշումներն ուղղարկվել են համապատասխան իրավասու մարմիններին։

2022թ. մարտի 23-ից մինչև 25-ը ներառյալ իրականացվել է տարեկան ծրագրով նախատեսված ստուգում ՀՀ Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ։

Արաքս, Ջրառատ և Ջրարբի բնակավայրերի վարչական տարածքներում ստուգման արդյունքում հայտնաբերվել է 16 խախտում, որը ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին։

2022թ. մարտի 30-ից մինչև ապրիլի 8-ը ներառյալ իրականացվել է տարեկան ծրագրով նախատեսված տեսչական ստուգում ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ։ Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 36 խախտում, որը ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին։

2022թ. մարտի 24-ից մինչև ապրիլի 13-ը ներառյալ իրականացվել է տարեկան ծրագրով նախատեսված տեսչական ստուգում Երևանի Կենտրոն վարչական շրջանում։ Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 31 խախտում, որից 6-ը հողերի տրամադրման խախտում։ Ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին։

2022թ. հունվարի 21-ից մինչև փետրվարի 2-ը ներառյալ քննչական վարչության գրության հիման վրա իրականացվել է ոչ պլանային ստուգում ՀՀ լոռու մարզի Ստեփանավան համայնքում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ։ Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 4 խախտում, որը ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին։

2022թ. փետրվարի 10-ին քաղաքացու գրության հիման վրա իրականացվել է ոչ պլանային ստուգում ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ բնակավայրում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ։ Ստուգման

արդյունքում հայտնաբերվել է 2 խախտում, որը ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին:

2022թ. փետրվարի 10-ից մինչև փետրվարի 16-ը ներառյալ ՀՀ վարչապետի հանձնարարականով իրականացվել է ոչ պլանային ստուգում ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 1 խախտում, որը ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին:

2022թ. մարտի 9-ից մինչև մարտի 15-ը ներառյալ քննչական վարչության գրության հիման վրա ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքում 2, ևս 1-ը Ամասիա համայնքում, իրականացվել է ոչ պլանային ստուգումներ ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում Գյումրիում մեկ ստուգման ժամանակ խախտում չի հայտնաբերվել, իսկ 2-րդում և Ամասիայում հայտնաբերվել է 1-ական խախտում, որը ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին:

2022թ. մարտի 9-ից մինչև մարտի 15-ը ներառյալ քաղաքացու գրության հիման վրա իրականացվել է ոչ պլանային ստուգում ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 1 խախտում, որը ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին:

2022թ. մարտի 9-ից մինչև մարտի 15-ը ներառյալ քննչական վարչության գրության հիման վրա իրականացվել է ոչ պլանային ստուգում ՀՀ լոռու մարզի Ստեփանավան համայնքում ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ: Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 2 խախտում, որը ներկայացվել է համապատասխան իրավասու մարմին:

2021թ. առաջին եռամսյակում տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների ժամանակ հայտնաբերվել է 83 խախտում, երբ 2021թ. նույն ժամանակահատվածում հայտնաբերվել էր 165 խախտում, իսկ 2020թ.՝ 66 խախտում:



2022 թվականի առաջին եռամսյակում կատարված ստուգումների 27,3%-ը (2021 թվականի առաջին եռամսյակում 66,7%-ը) նախատեսված էր 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով, իսկ 72,7%-ը (2021 թվականի առաջին եռամսյակում՝ 33,3%-ը) կատարվել է ըստ անհրաժեշտության։ Տարեկան ծրագրով նախատեսված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 8,3 օր, ստուգման համար հատկացված մարդկային ռեսուրսը չի գերազանցել 2,7-ը։ Ըստ անհրաժեշտության իրականացված 1 ստուգման միջին տևողությունը կազմել է 3 օր, հատկացված մարդկային ռեսուրսը՝ 1,25 մարդ/օր։

Ստուգումների արդյունքում հայտնաբերվել է թվով /25/ վարչական իրավախախտումներ, մասնավորապես խախտվել է՝ ՀՀ հողային օրենսգրքի քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողամասերի կարգը /սահմանափակումների մասով/, պետության և համայնքների սեփականության պատկանող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման, մրցույթների կազմակերպման և ձևակերպման, կառուցապատման իրավունքի և հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը հաշվի չառնելով հողամասերում կառուցված ապօրինի շինություններ կառուցելու կարգը։

Բոլոր ստուգված համայնքներում իրականացվել են խորհրդատվական և բացատրական աշխատանքներ։

## 3. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Տրանսպորտային անվտանգության բնագավառում**

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի տարածքներում գործող «Հայավտոկայարան» ՓԲԸ ավտոկայարաններում, ավտոկայաններում, երթակարգավարական կետերում, ինչպես նաև այդ տարածքներից դուրս կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղիների սկզբնակետ/վերջնակետերում պարբերաբար իրականացվել են միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների սպասարկման կազմակերպման գործընթացի, բեռնափոխադրումների գործընթացի, տրասպորտային միջոցների շահագործման և տեխնիկական զննության անցկացման կայանների գործունեության նկատմամբ 1126 մշտադիտարկում (2021 թվականի նույն ժամանակահատվածում՝ 908, և 2020 թվականի նույն ժամանակահատվածում՝ 700):




Կանոնավոր, ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացի նկատմամբ իրականացվել է 906 (2021 թվականի նույն ժամանակահատվածում՝ 675 և 2020 թվականի ռաջին եռամսյակում՝ 363) մշտադիտարկում, որից 58,27%-ը Երևանում, մնացածը՝ համաձայն պատկերի.



2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Տեսչական մարմնի տարածքային բաժինների (բացառությամբ Երևանի) տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են մարզերի տարածքով անցնող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներին տեղադրված գովազդային վահանակների օրինականության վերաբերյալ ուսումնասիրություններ և դիտարկումներ: Հաշվետու ժամանակաշրջանում տարածքային բաժինների մասնագետների կողմից գույքագրվել են միջպետական ավտոճանապարհներին ապօրինի տեղադրված ընդհանուր թվով 160 (2021 թվականի նույն ժամանակահատվածում՝ 68, և 2020 թվականի նույն ժամանակահատվածում՝ 177) գովազդային վահանակներ:

**Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների քանակը**




**<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>**

ՀՀ տարածքում տեղակայված 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում՝ տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա, նոր կառուցված և վերակառուցված էներգատեղակայանքներում իրականացվել է 367 <u>տեխնիկական ստուգում</u>, որից 206 (56.1%) էլեկտրաէներգետիկական և 161 (43.9%) գազամատակարարման համակարգերում: 2021թ.՝ 323 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 140 (43.3%) էլեկտրաէներգետիկական և 183 (56.7%) գազամատակարարման համակարգերում: 2020թ.՝ 251 տեխնիկական ստուգում, համապատասխանաբար՝ 102 (40.6%) էլեկտրաէներգետիկական և 149 (59.4%) գազամատակարարման համակարգերում:




Արդյունքում տրվել է 293 (79.8%) գործարկման եզրակացություն, իսկ թվով 74 (20.2%) տեղակայանքների գործարկումներ՝ նախագծի և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին անհամապատասխանության, թերի շինարարական աշխատանքների և ներկայացված տեխնիկական փաստաթղթերի ոչ ամբողջականության համար ակտ-կարգադրագրերով մերժվել են (2021թ.՝ 273 (84.5 %) գործարկում և 50 (15.5%) մերժում: 2020թ.՝ 213 (84.8 %) գործարկում և 38 (15.2%) մերժում):




Ավարտվել է մահվան ելքով 1 պատահարի մասնագիտական քննություն (2021թ.՝ 1): Էներգատեղակայանքներում տեղի է ունեցել մահվան ելքով 4 պատահար (4-ական՝ 2020թ. և 2021թ.), որոնց վերաբերյալ ՀՀ կառավարության սահմանած կարգով կազմակերպվում և իրականացվում են մասնագիտական քննություններ, ընդ որում՝ 1-ական Երևանում, Լոռու, Արագածոտնի և Արարատի մարզերում (2021թ.՝ 1-ական Երևանում և Արմավիրի մարզում, 2-ը՝ Կոտայքի մարզում: 2020թ.՝ 2-ը Տավուշի, 1-ական Շիրակի և Գեղարքունիքի մարզերում):

**Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում**

Տեսչական մարմնի կողմից հաշվառվել և վերլուծվել է ՀՀ-ում 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում արձանագրված 1042 հրդեհի դեպք (2021թ.՝ 941 հրդեհ, 2020թ.՝ 1569 հրդեհ), 107-ի դեպքում կազմվել են հրդեհի մասին ակտեր (2021թ.՝ 156 հրդեհ, 2020թ.՝ 168 հրդեհ):




Տեղի ունեցած հրդեհներից զոհվել է 9, իսկ վնասվածքներ ստացել՝ 26 մարդ:




Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 338 հրդեհատեխնիկական հետազոտություն (2021թ.՝ 26, 2020թ.՝ 34):

2022 թվականի փետրվարի 2-ի ՏՄ ղեկավարի տեղակալի թիվ ՀՆԶ/09.1/26-2022 հանձնարարականով կատարվել են ՔՏՀԱՏՄ 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված հրդեհատեխնիկական հետազոտություններ բժշկական սպասարկում իրականացնող 338 առողջապահական օբյեկտներում: Հետազոտված օբյեկտները և այդտեղ բացահայտված խախտումներն ըստ մարզերի ունեն հետևյալ պատկերը.




Հրդեհատեխնիկական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ առանց թերությունների շահագործվում է 10 առողջապահական օբյեկտ, դրանք են՝

- «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ԱՐԱՐԱՏԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ԱԿՈՒՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ,
- «ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՊՓԲԸ,
- «ՀՀ ԱՆ ԹՈՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ,
- «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ,
- «ՀՌԻՓՍԻՄԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊՈԱԿ:

Հետազոտությունների արդյունքում 328 բուժ. հաստատություններում բացահայտվել են տարաբնույթ խախտումներ: Ընդհանուր առմամբ, արձանագրվել է 2019 խախտում, որոնք առավել կրկնվողներն են.

- ✓ հիվանդանոցները, պոլիկլինիկաները, ամբուլատորիաները սարքավորված չեն հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով - 281 խախտում, ինչը կազմում է բացահայտված բոլոր խախտումների 14%-ը,
- ✓ հակահրդեհային ինքնաշխատ համակարգից հրդեհի տագնապի ազդանշանը չի փոխանցվում լիազոր մարմնին – 255 խախտում՝ 13%-ը,
- ✓ արտաքին հրդեհաշիջման համար օբյեկտների տարածքում կամ դրանց մոտակայքում (200մ շառավղով) նախատեսված չէ առնվազն 1 հրշեջ հիդրանտ կամ նվազագույնը 50 մ քառ. տարողությամբ հակահրդեհային ջրավազան - 226 խախտում՝ 11%-ը,

- ✓ շինարարական հիմնատարրերը մշակված (տոգորված) չեն հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով և չեն գտնվում մշակման (տոգորման) ներգործության ժամկետների մեջ - 195 խախտում՝ 10%-ը,
- ✓ օբյեկտն ապահովված չէ հրդեհաշիջման սկզբնական միջոցներով – 180 խախտում՝ 9%-ը,
- ✓ հակահրդեհային ինքնաշխատ համակարգը չի գտնվում սարքին վիճակում – 145 խախտում՝ 7%-ը,
- ✓ 15 մարդուց ավելի միաժամանակյա ներկայությամբ սենքերի դռները չեն բացվում դեպի դուրս, բացի Ա և Բ կարգի սենքերից - 120 խախտում՝ 6%-ը:




Տեսչական մարմնի կողմից ուսումնասիրվել և տրամադրվել է **147** <u>եզրակացություն</u> (2021թ.՝ 154, 2020թ.՝ 108) նախագծային փաստաթղթերի հակահրդեհային պահանջների համապատասխանելիության վերաբերյալ:

Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 183 օբյեկտների (2021թ.՝ 176, 2020թ.՝ 114) շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանքներին, որից 73-ը (40%)՝ Երևանում:




**Քաղաքաշինության բնագավառում**

2022 թվականի 1-ին եռամսյակում կատարվել է 162 տեղազննում, որոնցից 72-ը 44.4%՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: Ըստ մարզերի այն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը՝




2021 թվականի 1-ին եռամսյակում կատարվել է 325 տեղազննում, որոնցից 156-ը 48%՝ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում, իսկ 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում

կատարվել էր 635 դիտարկում և տեղազննում, որոնցից 38-ը 44.4՝ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: Դիտարկումների համեմատական գրաֆիկը բերված է ստորև.




Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 471 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժ ողովների աշխատանքներին, այդ թվում Երևանում՝ 161 (34%), Կոտայքում՝ 64 (14%), Գեղարքունիքում՝ 53 (11%), Արագածոտնում՝ 44 (9%), Լոռիում՝ 42 (9%), և այլն՝ ըստ պատկերի:




Ստորև ներկայացվում է տվյալ ոլորտում կատարած աշխատանքների համեմատական պատկերն ըստ տարիների.




2021 թվականի նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են ավարտված շինարարական 613 օբյեկտների շահագործման ընդունող հանձնաժողովների աշխատանք-ներին, իսկ 2020 թվականի նույն ժամանակահատվածում՝ 477:

Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավարտական ակտերի վերաբերյալ 200 դրական և 224 բացասական եզրակացություն՝ քաղաքաշինական փաստաթղթերի ոչ պատշաճ ներկայացման և նախագծային անհամապատասխանությունների պատճառով:

Ըստ մարզերի այն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.




2021թ. նույն ժամանակահատվածում տրամադրվել է 325 դրական և 201 բացասական եզրակացություն, իսկ 2020-ին՝ 257 դրական և 194 բացասական եզրակացություն:




Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վերահսկողական աշխատանքների

ընթացքում հայտնաբերվել է 61 ինքնակամ կառույց ՀՀ ամբողջ տարածքում, այդ թվում Երևանում՝ 28 (46%), Շիրակի մարզում՝ 2 (3%), Լոռու մարզում՝ 10 (16%), Կոտայքի մարզում՝ 3 (5%), Արագածոտնի մարզում՝ 4 (7%), Տավուշի մարզում՝ 5 (8%), Արարատի մարզում՝ 2 (3%), Վայոց ձորում՝ 3 (5%) և Արմավիրի մարզում՝ 4 (7%):







2021 թվականի առաջին եռամսյակում հայտնաբերվել էր 69 ինքնակամ կառույց, իսկ 2020 թվականի նույն ժամանակահատվածում՝ 53: Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ, այն է՝ մարզպետներին և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին տրամադրվել են իրազեկող բնույթի գրություններ: Համայնքների ղեկավարներին ներկայացվել են առաջարկություններ՝ իրենց իրավասության սահմաններում ինքնակամ շինարարական աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ և հետևանքները վերացնելու ուղղությամբ:

## 4. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 104 բողոք, որից 50-ը (48%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 33-ը (32%)՝ տրանսպորտային անվտանգության, 14-ը (13%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 6-ը (6%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 1-ը (1%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին:







Ստացված բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ 30 (29,1%) բողոք հիմնավոր չէ: Հիմնավոր 57 (55,34%) բողոքներից 39-ը (68,4%) արդեն իսկ լուծում է ստացել, մնացածն ուսումնասիրության փուլում է: Բողոքների 42,3%-ը (44) ստացվել է թեժ գծով: Դրանց քանակական բաշխվածությունն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.



2021 թվականի նույն ժամանակահատվածում Տեսչական մարմնին հանրության կողմից հասցեագրվել է ընդհանուր առմամբ 88 բողոք, որից 48-ը (54%) վերաբերում է քաղաքաշինության բնագավառին, 17-ը (19%)՝ տրանսպորտային անվտանգության, 12-ը (14%)՝ հրդեհային և տեխնիկական անվտագության, 6-ը (7%)՝ էներգետիկայի և էներգասպառման, իսկ 5-ը (6%)՝ հողի պահմանման և հողօգտագործման բնագավառներին: 2022 և 2021 թվականների համեմատականն ունի հետևյալ գրաֆիկական պատկերը.




Ըստ ամիսների հանրությունից ստացված բողոքներն ունեն հետևյալ բաշխվածությունը՝

| | հունվար | փետրվար | մարտ | |
|---|---|---|---|---|
| քաղաքաշինություն | 12 | 13 | 25 | 50 |
| հրդեհային | 6 | 3 | 5 | 14 |
| տրանսպորտ | 8 | 15 | 10 | 33 |
| էներգետիկա | | 4 | 2 | 6 |
| գեոդեզիա | 1 | | | 1 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 27 | 35 | 41 | 104 |

Ընդ որում, ստացված բողոքների ընդհանուր քանակի 59.6%-ը վերաբերում է Երևանում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին կամ գտնվող օբյեկտներին: Ստորև բերված է բողոքների բաշխվածության գրաֆիկն ըստ տարածքային միավորների և բնագավառների.




**<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>**

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հանրությունից ստացված 33 դիմում-բողոքներում (25-ը թեժ գծով) բարձրացված խնդիրների կարգավորման ուղղությամբ Տեսչական մարմնի տրանսպորտային անվտանգության վարչության, Երևանի, Շիրակի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Տավուշի տարածքային բաժինների տրանսպորտային անվտանգության մասնագետների կողմից իրականացվել են առարկայական ուսումնասիրություններ, դիտարկումներ և վերահսկողական գործառույթներ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ լուծում են ստացել 23 հիմնավոր բողոքներից 19-ը (82,6%) (նախորդ տարվա 3 ամիսների ընթացքում՝ 16-ից 12-ը (75%)), 3 գործ ընթացքի մեջ է, 1-ը հնարավոր չի լուծել՝ գործիքակազմի բացակայության պատճառով: Բարձրացված խնդիրները հիմնականում վերաբերում են երթուղիների սակագների ինքնակամ բարձրացումներին, երթուղիների թերի շահագործմանը կամ չշահագործմանը, տրանսպորտային միջոցների սխալ կահավորմանը, չվացուցակների խախտումներին, կանոնավոր և ոչ կանոնավոր ապօրինի ուղևորափոխադրումներին և այլ:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված հիմնավոր 6 գրություններով բարձրացված խնդիրները լուծում են ստացել: Նախորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված հիմնավոր 5 գրություններից լուծում էր ստացել 2-ը (40%):

**<u>Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում</u>**

Հանրությունից ստացված 6 բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնավոր են 5-ը, որոնցից հաշվետու ժամանակահատվածում 3-ը (60%) արդեն իսկ լուծում է ստացել: 3 գործ ընթացքի մեջ է: Նախորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում ստացված 2 հիմնավոր բողոքներն (100%) էլ ստացել էին համապատասխան լուծումներ: Բարձրացված խնդիրները

հիմնականում վերաբերում են էներգատեղակայքների անվտանգության գոտիների խախտումներին:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների դիմումներում բարձրացված այլ հարցեր ուսումնասիրվում են, ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները էներգետիկայի բնագավառում հասարակության անվտանգությունը և հարմարավետությունն ապահովելու ուղղությամբ: Մշտապես տրամադրվում է իրավախորհրդատվական աջակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից գրություններ չեն ստացվել: 2021 թվականի առաջին եռասյակի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 2 գրություններից լուծում էր ստացել մեկը, 2020 թվականին՝ 5 գրություններից և դիմում-բողոքներից 2-ը հիմնավոր էին և ստացել էին լուծում:

**Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում**

Հաշվետու ժամանակահատվածում հանրությունից ստացված 14 դիմում-բողոքների (5-ը թեժ գծով) ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնավոր են 6-ը: Հիմնավոր բողոքների 67% արդեն իսկ լուծում է ստացել, 5 գործ ընթացքի մեջ է: Նախորդ տարվա 3 ամիսների ընթացքում ստացված 12 դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել էր, որ հիմնավոր են 6-ը, ինչը կազմում է ընդհանուր քանակի 50%: Հիմնավոր բողոքների 83% լուծում էր ստացել, 1 գործ ընթացքի մեջ էր: Հանրությունից ստացված 1 բողոքի հիման վրա իրականացվել էր ստուգում:

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 56 գրություն, որից 55-ը (98%) արդեն իսկ լուծում է ստացել, 1-ը գտնվում է ընթացքի մեջ: 2021 թվականի նույն ժամանակահատվածում ստացված 73 գրություններից 69-ը (94,5%) լուծում էին ստացել, 4-ը գտնվում էին ընթացքի մեջ: 2020 թվականի նույն ժամանակահատվածում ստացվել է 22 բողոք, որից հիմնավոր են 15-ը (68,2%):

**Քաղաքաշինության բնագավառում**

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող հանրությունից ստացված ընդհանուր առմամբ 50 (14-ը թեժ գծով) դիմում-բողոք: 22 հիմնավոր բողոքներից լուծում է ստացել 13-ը (59,1%), ընթացքի մեջ է 20-ը: 1 բողոքի հիման վրա իրականացվել է ստուգում:

Դիմումներում նշված հասցեներում կատարվել է մասնագիտական տեղազննություն, ստուգվել է իրականացվող շինարարական աշխատանքների, առկա քաղաքաշինական փաստաթղթերի տրման օրինականությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին: Ստացված դիմում-բողոքների ուսումնասիրությունների, ինչպես նաև կատարված մշտադիտարկումների արդյունքում պարզվել է, որ խնդրահարույց և առավել կրկնվող քաղաքաշինական ոլորտում հանդիպող խնդիրները հիմնականում վերաբերվում են.

- ՀՀ կառավարության N 596 որոշմամբ հաստատված կարգերի շեղումներով համայնքների ղեկավարների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրմանը.
- համայնքների ղեկավարների կողմից նախագծման թույլտվությանը (ճարտարապետահատակագծային առաջադրանքին) հակասող նախագծերի համաձայնեցմանը .
- կառուցապատողների կողմից նախագծային շեղումներով իրականացվող շինարարական աշխատանքներին:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 88 գրություն, լուծում են ստացել 72-ում (81,8%) բարձրացված խնդիրները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում Տեսչական մարմինը ուսումնասիրել է իրեն հասցեագրված քաղաքաշինական ոլորտին առնչվող ընդհանուր առմամբ 91 (4-ը թեժ գծով) դիմում-բողոք և գրություն, որից 43-ը (47%) ստացվել է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, իսկ 48-ը (53%)՝ տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից: Հանրությունից ստացված 48 բողոքներից 47-ը հիմնավոր էին, 27-ն ստացել էին լուծում:

2020 թվականի նույն ժամանակահատվածում ստացվել էր 175 դիմում-բողոք և գրություն, որից 81-ը (47%)՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, իսկ 94-ը (53%)՝ տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից:

**<u>Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում</u>**

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում հանրությունից ստացվել է 1 բողոք, որն հիմնավոր է, բողոքի հիման վրա իրականացվել է ստուգում: 2021 թվականի նույն ժամանակահատվածում տնտեսավարող սուբյեկտներից և քաղաքացիներից ստացվել էր 5 դիմում-բողոք, որից հիմնավոր էին 3-ը, իսկ լուծում էր ստացել 1-ը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացվել է 12 գրություն, լուծում են ստացել 11-ում (91,6%) բարձրացված խնդիրները: Նախորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված 10 գրություններից պատասխանվել էր 7-ին (70%):

## 5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Վարչական վարույթները հիմնականում հարուցվել են Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների շրջանակներում Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարագրերի, ղեկավարի տեղակալի կողմից տրված հանձնարարականների (տրանսպորտային անվտանգության ոլորտում), պետական մարմինների և քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա իրականացված վերահսկողական միջոցառումների արդյունքում:

**Տրանսպորտային անվտանգության բնագավառում**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված վերահսկողական միջոցառումների արդյունքում տրանսպորտային օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 198 (2021թ.՝ 59, 2020թ.՝ 151) արձանագրություն (ստուգման ակտ): Կայացվել է 229 (2021թ.՝ 42, 2020թ.՝ 99) որոշում վարչական տույժ նշանակելու վերաբերյալ և 2 (2021թ.՝ 17, 2020թ.՝ 13) որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին: Նշանակվել է 7.534.000 (2021թ.՝ 4.110.000, 2020թ.՝ 3.990.000) ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ բացահայտված խախտումները վերացնելու ուղղությամբ: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնողների կողմից հաստատված չվացուցակներով ավտոբուսների (միկրոավտոբուսների) մեկնման ժամերը չպահպանելուն, առանց ճանապարհային թերթիկի կամ ճանապարհային թերթիկում համապատասխան նշումների բացակայությամբ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացմանը և ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցներն առանց երթուղին արտահայտող ցուցատախտակի և (կամ) երթուղու չվացուցակի և (կամ) երթուղու սխեմայի (բացառությամբ ներհամայնքային երթուղիների) և (կամ) սպասարկող կազմակերպության անվանման և գտնվելու վայրի նշումով ցուցանակի և (կամ) տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների պահանջներին անհամապատասխան արտաքին և ներքին կահավորմամբ շահագործելուն, առանց թույլտվության տեղադրված գովազդային վահանակներին:

**Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում**

Իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում էներգետիկայի և էներգասպառման բնագավառի օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ կազմվել է 6 արձանագրություն (ստուգման ակտ) (2021թ.՝ 8, 2020թ.՝ 9): Կայացվել է 7 որոշում վարչական տույժ կիրառելու մասին (2021թ.՝ 2, 2020թ.՝ 9), վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշում չի կայացվել (2021թ.՝ 0, 2020թ.՝ 2 որոշում): Նշանակվել է 400.000 (2021թ.՝ 100.000, 2020թ.՝ 750.000) ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Արձանագրված խախտումները վերաբերում են նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքները գործող ցանցերին առանց Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազորված պետական մարմնի (այսինքն՝ Տեսչական մարմնի) գործարկման եզրակացության միացնելուն, ինչպես նաև Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերի պահանջները չկատարելուն:

**Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում**

2022 թվականի առաջին եռամսյակում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 19 արձանագրություն (2021թ.՝ 33): Կայացվել է 64 որոշում վարչական տույժ կիրառելու մասին (2021թ.՝ 53, 2020թ.՝ 15) և 5 (2021թ.՝ 2, 2020թ.՝ 3) որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կարճելու մասին: Նշանակվել է 15.555.000 (2021թ.՝ 7.690.999, 2020թ.՝ 20.745.000) դրամի չափով վարչական տուգանք: Հաշվետու ժամանակահատվածում գանձվել է 2.495.000 (2021թ.՝ 1.190.000, 2020 թ.՝ 1.700.000) դրամ:

Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերում են Տեսչական մարմնի կողմից տրված կարգադրագրերի պահանջները չկատարելուն, արտադրական վտանգավոր օբյեկտները արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման չներկայացնելուն, արտադրական վտանգավոր օբյեկտները ամենամյա տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելուն, ինչպես նաև հրդեհային անվտանգության կանոնները խախտելուն:

**Քաղաքաշինության բնագավառում**

2022 թվականի առաջին եռամսյակում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 64 (2021թ.՝ 70) արձանագրություն: Կայացվել է 129 որոշում վարչական տույժ կիրառելու մասին, 2 որոշում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կարճելու մասին: Նշանակվել է 11.450.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Հաշվետու ժամանակահատվածում գանձվել է 4.792.000 ՀՀ դրամ գումար:

Արձանագրված խախտումները վերաբերում են կառուցապատողի կողմից առանց համապատասխան լիցենզիա ունեցող անձանց միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորման ենթակա շինարարական աշխատանքներ իրականացնելուն, շինարարության ընթացքում հաստատված նախագծի, շինարարական արտադրության կամ ընդունման նորմերի, ինչպես նաև ստանդարտների խախտումներ թույլ տալուն, օրենքով սահմանված կարգի խախտումներով տեխնիկական հսկողություն իրականացնելուն, օրենքով սահմանված դեպքերում կառուցապատողի կողմից հեղինակային կամ տեխնիկական հսկողության իրականացում չապահովելուն, շինարարության ընթացքում հեղինակային հսկողության պարտականությունը չկատարելուն կամ խախտումներով կատարելուն և այլն:

## 6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Տեսչական մարմնի դեմ բերվել է 12 (2021թ.՝ 29, 2020թ.՝ 2) բողոք վերադասության կարգով: Ըստ վերահսկման առանձին ոլորտների՝ պատկերը հետևյալն է.




<u>Տրանսպորտի անվտանգության բնագավառում</u> կայացված 7 (2021թ.՝ 24) վարչական ակտ բողոքարկվել է վերադասության կարգով: 2-ով (2021թ.՝ 3) կայացված որոշումները բեկանվել և կարճվել են, 5-ով (2021թ.՝ 21)՝ կայացված որոշումները թողնվել են անփոփոխ: Բողոքները վերաբերել են Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների և այլ տնտեսավարողների անհամաձայնությանը Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերին:

2020 թվականի նույն ժամանակահատվածում վերադաս բողոք չի բերվել:

<u>Տեխնիկական անվտանգության բնագավառում</u> կայացված 4 (2021թ.՝ 5, 2020թ.՝ 2) վարչական ակտ է բողոքարկվել, 1-ով (2021թ.՝ 3) որոշում է կայացվել կայացված որոշումը բեկանելու և կարճելու վերաբերյալ, 3-ով (2021թ.՝ 2)՝ կայացված որոշումները թողնվել են անփոփոխ: Բողոքները վերաբերել են արտադրական վտանգավոր օբյեկտները ռեեստրում գրանցելու պահանջի, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման, արտադրական վտանգավոր օբյեկտի կամ դրանում առկա տեխնիկական միջոցի, տեխնոլոգիական սարքավորման շահագործումը դադարեցնելու պահանջներին:

<u>Քաղաքաշինության բնագավառում, Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում, գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառում</u> կայացված 1 վարչական ակտ է բողոքարկվել, որը բողոքարկման վարույթի քննության արդյունքում բեկանվել և կարճվել է: 2021, ինչպես նաև

2020 թվականների առաջին եռամսյակների ընթացքում վերադասության կարգով բողոքներ չեն ներկայացվել:

Բողոքը վերաբերել է Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգման ժամկետներին և ընթացակարգին:

## 6.1 ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում դատական կարգով բողոքարկվել է ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից կայացրած 15 վարչական ակտ, որից 8-ը՝ տեխնիկական անվտանգության, 3-ական՝ տրանսպորտի և հողօգտագործման, ևս 1-ը՝ քաղաքաշինության բնագավառներում: Ըստ տարիների՝ համեմատական գրաֆիկն ունի հետևյալ պատկերը.




<u>**Տրանսպորտի անվտանգության բնագավառում**</u> կայացված 3 (2021թ.՝ 4, 2020թ.՝ 21) վարչական ակտ բողոքարկվել է դատական կարգով: Դատական գործերը գտնվում են դատական քննության փուլում: Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերը բողոքարկվել են, մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի այն պահանջի հիմնավորմամբ, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը պետք է կազմվի իրավախախտում թույլ տված անձի ներկայությամբ: Վերը նշված դեպքերը վերաբերում են Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողների կողմից փոխադրումներին ներկայացվող պահանջների չկատարմանը և գովազդի մասին օրենսդրության պահանջների խախտմանը: Հաշվետու ժամանակահատվածում դատարան ներկայացված հայցապահանջները ընդունվել են վարույթ, Տեսչական մարմնի կողմից ներկայացվել են համապատասխան առարկություններ:

**Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում**

2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում դատական կարգով ոչ մի վարչական ակտ չի բողոքարկվել (2021թ.՝ 0, 2020թ.՝ 1):

**Տեխնիկական անվտանգության բնագավառում** կայացված 8 (2021թ.՝ 10, 2020թ.՝ 4) վարչական ակտ բողոքարկվել է դատական կարգով:

Տեսչական մարմնի կողմից կայացված վարչական ակտերը բողոքարկվել են, մասնավորապես, այն հիմնավորմամբ, թե Տեսչական մարմնի կողմից չեն պահպանվել ստուգումների ընթացակարգերի հետ կապված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտները պատշաճ ծանուցված չեն եղել գործի քննության մասին, կարգադրագիրը կայացվել է ոչ այն անձի նկատմամբ, ով իրավասու է վերացնել խախտումները և այլն: Դատական գործերը գտնվում են դատական քննության փուլում: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել են համապատասխան առարկություններ:

2021 թվականի նույն ժամանակահատվածում դատական գործերից մեկով դատարանը կայացրել է Տեսչական մարմնին կողմ դատական ակտ, 2-ով բավարավել է բողոքաբերի պահանջը: Դատական կարգով վիճարկվել են Տեսչական մարմնի կողից տրված կարգադրագրերի պահանջներն, որոնց վերաբերյալ դատարանը կայացրել է ի օգուտ Տեսչական մարմնի դատավճիռ, իսկ մյուս 2 գործերով կայացվել է Տեսչական մարմնի դեմ դատավճիռներ: Դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքների խախտումների հիմքերով դատական ակտերը բողոքարկվել են վերադասության կարգով: Տեսչական մարմնի կողմից ներկայացվել են առարկություններ և լիազորված անձանց լիազորագրերը՝ գործի դատաքաննությանը մասնակցելու համար:

**Քաղաքաշինության բնագավառում** կայացված 1 (2021թ.՝ 0, 2020թ.՝ 0) վարչական ակտ է բողոքարկվել դատական կարգով: Վարչական ակտը բողոքարկվել է այն հիմնավորմամբ, որ տնտեսավարողը իրավախախտում թույլ չի տվել:

**Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում** կայացված 3 (2021թ.՝ 0, 2020թ.՝ 0) վարչական ակտ բողոքարկվել է դատական կարգով: Տեսչական մարմնի վարչական ակտերը բողոքարկվել են, մասնավորապես, այն հիմնավորմամբ, թե Տեսչական մարմնի կողմից չեն պահպանվել Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին օրենքի պահանջները: Ներկայացվել են համապատասխան առարկություններ:

## 7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2022 թվականի առաջին եռամսյակում Տեսչական մարմնի ղեկավարը, ղեկավարի տեղակալը, կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները հարցազրույցներ, պարզաբանումներ են տվել մի շարք լրատվամիջոցների (Ազատություն ռադիոկայանին, Հանրային հեռուստաընկերություն, Արմենիա հ/ը, Հայաստանի հանրային ռադիո)։

ՀՀ ՔՏՀԱՏՄ և «Գեոդեզիստների և հողաշինարարների համահայկական միություն» ՀԿ-ի հետ համատեղ Ագրարային համալսարանում տեղի է ունեցել կլոր սեղան-քննարկում՝ **«Ինքնակամ կառույցների հաշվառման առանձնահատկությունները»** թեմայով, որի ընթացքում ներկայացվել է 2022 թվականի հունվարի 15-ից ուժի մեջ մտած ինքնակամ կառույցների հաշվառման կարգին։ Նաև աշխատանքային հանդիպում է տեղի ունեցել ԵՏՀ միջազգային փորձագետների առաքելության կազմի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության առկա աղբավայրերում 2022 թվականի ընթացքում ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքների, հայտնաբերված խախտումների և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաև կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ հարցեր։

ՔՏՀԱՏՄ ղեկավար Գ.Շախբազյանը հանրային հաշվետվություն է ներկայացրել Հանրային հեռուստաընկերության «Բաց հարթակ» հաղորդաշարին, որի շրջանակներում խոսել է 2021 թ. ստուգումներ, իրավախախտումների և արձանագրված արդյունքերի մասին։

Հաշվետու եռամսյակում իրականացված մշտադիտարկման արդյունքում հավաքագրվել և արխիվավորվել է 160 լրատվական հրապարակում՝ նախորդ տարվա 135 փոխարեն։ Դրանցից 53-ը (նախորդ տարի՝ 105) վերաբերում է տրանսպորտի, 24-ը (2021թ նույն ժամանակահատվածում՝ 1) հրդեհային անվտանգության, 22-ը՝ էներգետիկայի բնագավառին և էներգասպառման ոլորտին, 18-ը (2021թ՝ 1)՝ հողօգտագործման, 17-ը (2021թ՝ 14)՝ քաղաքաշինությանը, 26-ը (2021թ՝ 7)՝ ընդհանուր բնույթի։ Կատարվել են կառավարման խորհրդի, ինչպես նաև մասնագիտական քննության հանձնաժողովի նիստերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տեղադրում utfsib.am կայքում։

Նշված ժամանակահատվածում կատարված իրազեկման և խորհրդատվական աշխատանքներն ըստ ոլորտների և բնույթի ունեն հետյալ գրաֆիկական պատկերները







Ստորև ներկայացվում է 2022 թվականի առաջին եռամսյակում իրականացված խորհրդատվական և իրազեկող բնույթի աշխատանքն ըստ ոլորտների:

**<u>Տրանսպորտային անվտանգության բնագավառում</u>**

Իրազեկման նպատակով Տեսչական մարմնի կողմից կազմակերպվել է 96 (2021թ՝ 83, 2020թ.՝ 116) հանդիպում և աշխատանքային խորհրդակցություն միջմարզային, ներմարզային և միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների տնօրենների հետ: Խորհրդատվություն է տրամադրվել 85 տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 53-ը (62.3%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: 2021 թվականի նույն ժամանակահատվածում խորհրդատվություն է տրամադրվել 55 (2020թ.՝ 125) տնտեսավարողներին և քաղաքացիներին, որից 29 (2020թ.՝ 36)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ:

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է 5 (2021թ՝ 10, 2020թ.՝ 14) հոդված, մամուլին տրամադրվել է 3 (2021թ՝ 5, 2020թ.՝ 40) նյութ: Իրականացվել են խորհրդատվական և իրազեկող բնույթի 5 (2021թ՝ 4, 2020թ.՝ 4) ելույթ տարբեր հեռուստաալիքներով:



**Էներգետիկայի և էներգասպառման բնագավառում**

Խորհրդատվություն է տրամադրվել 47 տնտեսավարողի և քաղաքացու (2021թ՝ 121, 2020թ՝ 79), ընդ որում՝ 40 դեպքում (85,1%) Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից տրված հարցերը հիմնականում կապված են ՀՀ տարածքում 6 կՎ և բարձր լարման էլեկտրաէներգետիկական և միջին ու բարձր ճնշման գազամատակարարման համակարգերում նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու գործընթացի հետ, որն իրականացվում է համաձայն 2004թ. դեկտեմբերի 14-ի «Էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին կետի գ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի թիվ 739-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 5-ի N 1423-Ն որոշումների:

Տեսչական մարմնի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցի պաշտոնական էջում հրապարակվել է էներգետիկայի և էներգասպառման ոլորտին վերաբերող 2 (2021թ՝ 5, 2020թ.՝ 2) հաղորդագրություն: 2020 թվականի առաջին եռամսյակում հրապարակվել էր նաև 10 մամուլի հաղորդագրություն տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով, թերթերին տրամադրվել էր 26 նյութ, նկարահանվել էր 1 տեսահոլովակ՝ https://www.youtube.com/watch?v=devd0V-NLuk:




**Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառում**

Տեխնիկական և հրդեհային անվտանգության հարցերով 2022 թվականի առաջին եռամսյակում տրամադրվել է խորհրդատվություն 770 (2021թ՝ 411, 2020թ.՝ 411) տնտեսավարողի և քաղաքացու, որից 53%-ը կատարվել է տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների նախաձեռնությամբ:

Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են հրդեհային և տեխնիկական անվտանգության օրենսդրության պահանջների խախտումներին, այդ թվում՝ օբյեկտների միջև հակահրդեհային միջտարածություններին, հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգերի առկայության պահանջներին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի

2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 գլուխ 7), կրակմարիչների քանակին (ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015թ. հունիսի 18-ի թիվ 595-Ն հրամանով հաստատված՝ հրդեհային անվտանգության կանոնների հավելված 1 բաժին VIII):

Նշված ժամանակահատվածում իրազեկման նպատակով կազմակերպվել է 40 (2021թ՝ 20, 2020թ.՝ 72) հանդիպում, ՏՄ պաշտոնական կայքում տեղադրվել է 2 (2021թ՝ 2, 2020թ.՝ 9) հոդված: 2020 թվականի առաջին եռամսյակում հրապարակվել էր 27 մամուլի հաղորդագրություն տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով, թերթերին տրամադրվել էր 26 նյութ նկարահանվել էր 1 տեսահոլովակ՝ https://www.youtube.com/watch?v=WmJSgnH3Mco:

**Քաղաքաշինության բնագավառում**

Հաշվետու ժամանակահատվածում խորհրդատվություն է տրամադրվել 202 (2021թ՝ 243, 2020թ.՝ 237) տնտեսավարողների և քաղաքացիների, որից 107 դեպքում (53%)՝ Տեսչական մարմնի նախաձեռնությամբ: Տնտեսավարողների և քաղաքացիների կողմից առավել հաճախ տրվող հարցերը վերաբերում են.

- ✓ շենք-շինությունների, ինչպես նաև հարակից հողամասերում կառուցվող շենքերի միջև եղած հեռավորություններին՝ հարաչափերին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 76, 79, 80, 81 կետեր և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ բնակարանների լուսավորության և ինսոլացիոն հաշվարկներին. (Արհեստական և բնական լուսավորում ՀՀՇՆ 22-03-2017 շինարարական նորմեր).
- ✓ պատուհաններից դեպի հարևանի տարածք տեսանելիության հետ կապված հարցեր («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 79, 80, 81 կետեր)
- ✓ կառուցապատողների և հարևան շենքերի սեփականատերերի միջև գրավոր համաձայնությունների հետ կապված հարաբերություններին («Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի՝ ՀՀՇՆ 30-01-2014, 10-րդ գլուխ, 81 կետ և ՀՀՇՆ 30-01-2014, 26-րդ գլուխ, 439-446 կետեր).
- ✓ շենք շինությունների նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխության հարցերին (ՀՀ կառավարության 02.02.2002թ. N88 որոշմամբ հաստատված կարգի 3.1 և 3.2 կետեր):

Քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող սուբյեկտներին իրազեկելու նպատակով կազմակերպվել է 2 (2021թ՝ 20) հանդիպում: Իրազեկող բնույթի աշխատանքներ են իրականացվել զանգվածային լրատվության միջոցներով, այն է՝ հեռարձակվել է 4 (2021թ՝ 3) հեռուստառադիոելույթ, հրապարակվել 1 (2021թ՝ 4, 2020թ.՝ 3) հոդված ՏՄ պաշտոնական կայքում, ևս 1-ը տպագիր մամուլում (2020թ.՝ 5) :

**Պետական և տեղական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառում**

Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից 2022 թվականի առաջին եռամսյակում կատարված ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ ըստ անհրաժեշտության ստուգումների հետ միաժամանակ, համայնքների ղեկավարներին և համապատասխան բաժինների պաշտոնատար անձանց տրվել են ոլորտի հետ կապված իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններ, ինչպես նաև օրենսդրական պահանջներին վերաբերվող խորհրդատվություններ: Այդ թվում.

- ✓ հողային հաշվեկշիռը (բալանսը) ճիշտ կազմելու վերաբերյալ (ՀՀ կառավարության 23.10.2000թ. «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 31.05.2005թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների, մարզերի և Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռները կազմելու մասին հրահանգները հաստատելու մասին» թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգ),
- ✓ աճուրդային փաթեթների պարունակության վերաբերյալ (ՀՀ «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 12.04.2001 թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշման 3-րդ կետի ա) և գ) ենթակետեր),
- ✓ հողերի նպատակային նշանակությունը փոխելու համար՝ միջգերատեսչական հանձնաժողով ուղարկվող փաթեթների պարունակության, նպատակային և գործառնական հողատեսքերի կարգավիճակը փոխելու վերաբերյալ՝ (ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշում):

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքում տեղադրվել է 3 (2021թ՝ 1, 2020 թ.՝ 3) հոդված, հեռարձակվել է 2 հեռուստառադիոելույթ (ռեպորտաժ): 2020 թվականի առաջին եռամսյակում տպագիր և առցանց տարբեր լրատվամիջոցներով հրապարակվել էր 19 հաղորդագրություն:

## 8. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Տրանսպորտի բնագավառում**

Առաջարկվել է ՀՀ կառավարության 2019 թվականի օգստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին N 1025-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

**Առաջարկի բովանդակությունը և ակնկալվող արդյունքը.**

Նախագծով վերը նշված որոշմամբ հաստատված 1-ին ստուգաթերթը համապատասխանեցվել է 2020 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված N 1994-Ն որոշմանը՝ ապահովելով վերահսկողության անխոչընդոտ իրականացումը կանոնավոր ուղևորփոխադրումներ իրականացնող տնտեսավարողների մոտ:

**Տեխնիկական և հրդեհային անվտանգության, քաղաքաշինության բնագավառներ**

Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ առաջարկություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

**Առաջարկի բովանդակությունը և ակնկալվող արդյունքը.**

Առաջարկվել է լրացում կատարել Օրենքի 2.1-ին հոդվածում, փոփոխություններ կատարել Օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներում:

Նախագծի ընդունման արդյունքում Տեսչական մարմինը հնարավորություն կունենա քաղաքաշինության, հրդեհային և տեխնիկական անվտանգության ոլորտներում ստուգումներն իրականացնել ոչ միայն սուբյեկտների մոտ, այլև օբյեկտներում, առանց ստուգման մասին նախնական ծանուցման՝ այդ կերպ ապահովելով ստուգումների բնականոն ընթացքը և նվազագույնի հասցնելով անձանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին սպառնացող վտանգը:

**Տեխնիկական և հրդեհային անվտանգության բնագավառ**

Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ առաջարկություն է ներկայացվել Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին, Հրդեհային անվտանգության մասին, Դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենքներում և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին:

**Առաջարկի բովանդակությունը և ակնկալվող արդյունքը.**

Առաջարկվել է Տեսչական մարմնի կողմից կայացվող՝ տեխնիկական կամ հրդեհային վտանգ ներկայացնող օբյեկտների շահագործման արգելման վերաբերյալ վարչական ակտերի (կարգադրագրեր/որոշումներ) պահանջների կատարումը վերապահել ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը (հաշվի առնելով նշված մարմնի լիազորությունների շրջանակը և գործիքակազմը)։

Համապատասխան լրացումները հնարավորություն կտան տեխնիկական և հրդեհային անվտանգության ոլորտներում լիարժեք դարձնել վերահսկողությունը, նվազեցնել անձանց կյանքին, գույքին և շրջակա միջավայրին սպառնացող վտանգների ռիսկը՝ այդ ռիսկի նվազեցման պահանջը չթողնելով միայն տնտեսավարողների հույսին։

## 9. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տեսչական մարմնի կատարողականի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով Տեսչական մարմինների մասին 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի 11-րդ հոդվածի պահանջների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին N 693-Ն որոշման հիման վրա կազմված կատարողականի գնահատման մեթոդոլոգիան (Հավելված):